



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԿԻՉԵԱՎԱՐՈՒՄ ԿԱՐՏԻ

ԿՐԵ . ԳՐ . ԵՐԱՆԻՏԱՆ

1971

ԻՋՄԱՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԿ.

ԻՋՄԱՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

2-50

398

Մ-66

ՀԵՄ ԱՎՃԻ ՀԵՄ ՃՍՄՊԱՍԶ

ՀԵՄ ՃԻՆԻՎԻԶ

ՄԷՓԻՍՏՈՓԷԼ

Հ.Ա.Ե. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՏԻՎԱԳԵՐԱՆ  
ՄԵՏՈՒԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԿԻ

1870P

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1958

1871

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY



UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

# ՄԷՓԻՍՏՈՓԵԼ



323

---

V. 49

UPHOLSTERY

~~39107~~

~~20624~~

32513

# ՄԵԾԾՕ - ՄՕՏԱ Ա.Ի.ԵՏԱ.ՐԱ.Ն

ՈՐ ՔԱՐՈՋԵՑԻՆ ՄՇՈՅ ԱՌԻԼԹԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ԵՒ ԵՍԱՅԻ ՎԱՐԳԱՊԵՏՆԵՐԸ

Ի 11 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1870 Կ. ՊՈԼԻՍ

Տեառի՛կ, աւետարուխիկ,  
Զուռնայ փշիկ, թուխմանուկիկ,  
Եփե գաղայ, ու քուլեչայ,  
Եղն ի վրէն կը պճպճայ,  
Ուտէ ետայ, խմէ ետայ,  
Հագնի ետայ, խնէ ետայ...

ՍՏՈՐԳՎԱՆ 351

ԻՐԱԿԱՆ և շօշախելի ճշմարտութիւն  
մ'է որ խտտածարակ կենդանիները՝ հոն  
կ'արածին, ուր որ կ'ապականեն. և փո-  
խադարձաբար՝ հոն կ'ապականեն, ուր  
որ կ'արածին.

Ասանկ ալ Մշոյ Եսայի և կարապետ  
վարդապետները Աղգին քրտնաթոր վաս-  
տակոցը մէջ մինչեւ հիմայ լաւ մը յըղ-  
փանալնէն վերջը, այսօր առանց երես-  
նին երկու ձեռքերնուն մէջ ծածկելու,  
յանդուզն անուանարկական հրապարա-

կախօսութեան կ'ելլեն նախ այն քաղաքին մէջ, որուն ազգ. երիտասարդութիւնը՝ իստիստի կոչելու չժպրհած ատեննին՝ միանգամայն անոր դատողութիւնը իրենց երկասիրութեանը վրայ կը հրաւիրեն :

Երկրորդ, Մշտն էլ ժողովուրդը կ'անուանեն այն գաւառի հասարակութիւնը՝ որուն շնորհ եաւայե՞ծներն ըլլալնին՝ նոյն իսկ իրենց ստորագրութիւնովնին կը հաստատեն՝ ուրբաթով ծոցուր երեւաբնի անուն օղբնախոսովնան տետրակին մէջ :

Նազովրեցւոյն ժամանակակից՝ օրէնուսոյց փարիսեցիներն ու քահանայապետներն ալ այս երկու ընտրեալ Մ. օրէններուն պէս ճնճողուկներ քամած և ուղտեր կրլըած ժամանակնին աս ապուրը կ'ուտէին :

Հապա ի՞նչ կ'ուզես. միթէ անոնցմէ վա՛ր մնան մեր այս Նոր — օրինաց դպիրները. Որք ամաչել ամաչելով տես Պատրիարքին դուռը ո՛րչափ ուժգին ափ կ'առնեն և ի՞նչ չարիքներ կ'օգտանան Ս. Հայրիկին գլխուն՝ եթէ իրենց օրական սքորէնը հողալու միջոցը՝ այն է Ս.

ւերտարանի քարոզութեան պաշտօնը քա-  
ջարձակով (\*) մը իրենց մատակարարելու  
չնորհը զլացուի :

Ատենք ճիշդ այն աներեւս պատահելեան  
կը նմանին , որք դռներու ընթացիկ կոտ-  
րելու չափ զարնելէ ետքը՝ ձեռքի դա-  
ւազաննին ալ դռնէն ներս խօթելով՝ ո՛ր-  
քննիչ կ'ըլլան , կը կենան : կամ սանկ ը-  
սենք թատաղելի խանութի արուց կատու-  
ներուն պէս՝ մտի լեկելերն 'ի վեր ցաթ-  
կրակելով՝ անընդհատ կը ճրվճրվան :

վայ այն ժողովրդին , որուն քարո-  
շականութիւնը կամ հոգւոյ փրկութիւ-  
նը կը յաճճնուի այնպիսի Նսոյեան և Ղե-  
ւոնդեաններու , որք աւելի թատերա-  
կան ներկայացումներ տալու տրամադ-  
րութիւն ունին , քան թէ Յաւիտենակա-  
նին արձագանքն ըլլալու :

Եւ ի՞նչ է արդարեւ այն ողբերգա-  
կատակերդական նկարագիրը՝ զոր ըրած  
են « Ներկայացում երկուց վարդապե-  
տաց Խրիմեան Սրբազան Վատրիարքին »  
անունով :

Ո՛չ ապաքէն այնպիսի խեղկատակու-

Թիւն մ'է, որ Թատերաբեմերու վրայ  
անդամ ներելի չէ, Թող թէ եկեղեցա-  
կաններու ստորադրու թեամբ նոր-  
հաս ճրատարակագրու թեան մէջ :

Պարտքերնին՝ պարտքի վրայ դիզ-  
ուած, անօթութենէն շունչերնին հո-  
տած՝ ուտելու հաց շունչեցող Սանքիւ-  
լօղները՝ տեսէք որպիսի յոգեւորեան ան-  
հասարակութիւններ ՚ի լոյս կ'ընծայեն, միմիայն  
իրենց ցած վրէժխնդրութեանը յազուրդ-  
տալու համար՝ բաւական գումար մը վայ-  
րապար զոհելով :

Ասկէ զատ՝ « Ճանապարհորդութիւն  
՚ի Մոլտավիա », անուն տետրակ մ'ալ ու-  
նին եղեր, որ տպել տալու համար ծախ-  
քի կարօտութիւն ունենալով՝ իրենց մօտ  
պահուած կայ եղեր՝ իբրեւ զբարեւոյն  
և զազգայնիւն ՚ի հասարակութեան :

Երեքշաբթիէն՝ ուրբաթէն գլուխ ա-  
ռած շունին որ՝ ատոր ալ հոգը հոգան-  
բայց թող չցաւին՝ տեսածի խրտար ե-  
զանք, զահմէթ շուղեր :

Իշկէմպէճի գազանընտան՝ գատիֆէ,  
ճանֆէս չրգմաճ եա . . . :

Շամախստուլուպը ողջ ըլլայ՝ օր մ'ալ  
այդ աղայութիւնը՝ իր արքանեակներու  
վը մէկտեղ ձեռք ձեռքի տալով՝ ձեզի  
կ'ընեն անշուշտ, օրթալըխը չըրայի պէս  
վառելով ալթ իւսթ ընելու համար . . . :

Շիտակը խօսելով՝ ասոնք ազգերնուս  
պզտի ծառայութիւն մը բրած չեն սեպ-  
ուիր, երբ հրապարակաւ ամենուս կ'ի-  
մացնեն թէ՛ Ս. Պատրիարքին դէմքը  
թթուած է, թէ փորը կիսով չափ գրա-  
սեղանին վրայ կը դնէ՝ երբ դիր կը գրէ,  
թէ՛ յօնքը կը ճմռէ, թէ՛ յօնից երկայն  
և շէկ մազերը կը քանդէ՝ գետին կը թա-  
փէ, թէ՛ յօնից հետ կը խաղայ, թէ՛ ցու-  
ցամատը երկնցնելով՝ պինչը կը կոխէ և  
կը խառնէ, թէ՛ ոտք ոտքի վրայ դնելով  
կը բազմի, թէ՛ աչքերը խոշոր են, թէ՛  
ձխախտտի փաթեթը ճկտաձեւ խողովա-  
կի մը մէջ անկած՝ կողմնակի բերանը  
կառնէ ու զայրագին կը իւք ծուխը կը  
ծծէ, թէ՛ ձխամուրճը դորշախայտ պե-  
խերի երկայն մազերուն մէջը կը թաղ-  
ուին, թէ՛ մառախլապատ ծուխը՝ Արբա-  
զանին դէմքը ծածկելով՝ իրեն շնչառու

Թեան միջոցում Սէնայի նման յերկինս 'ի վեր կը ծառանայ, թէ՛ Սրբազանը կը դէւահարի և կը փրփրայ և զայրացեալ սրբտիւ կը գոռայ, թէ՛ դուխը կը շարժէ, թէ՛ անդուսպ կիրքերով զօրացած սեւարեան շառագնու թեամբ դէմքը կ'այլայլի, և ամրան եղանակի նման շանթահար և թուխ ամպերով կը մթագնէ, թէ՛ իբրեւ զՍ. Բջ սրգեկոտոր կ'որոտայ, թէ՛ ճակատին մորթը բօնթ բօնթ հեծած կը կրճուի, թէ՛ քթի ծայրը չորեքօրեայ մեռելի մը քթի ծայրի պէս կը սրանայ, թէ՛ սանդրի մատների պէս յօնից մազերը կը ցցուին, թէ՛ աչքերը խոր ընկած, ուղեղան մէջ պտուղներէն կրակ կը ցայտէ, թէ՛ մութ շրթունքը կապտած չիք պարզ կը լինի, թէ՛ բերանէն խոր մութ թօնների պէս հուր կը բորբոքէ, թէ՛ Ներբովգայ գլխուն ծծմբային հանքին պէս քթէն ծուխը դուրս կուտայ, թէ՛ ատամները ճարտու քարին նման մէկը մէկին զարնելով՝ կը կրճատէ, թէ՛ ձեռքերը ձիգ ետեւ փակած՝ սրունքներէն մինչ 'ի թիկնամէջ կը դողայ, և լկուե-

լով ոտքերը գետինը կը կոխէ, և ծունկերը գինեհարի պէս մէկըմէկ փաթտելով՝ քայլ կը փոխէ, թէ՛ ձեռքերը շեշտակի նման մարդու վրան թափ կուտայ . . . .

Այլ բան մնաց : Ո՛ր են ձեռքի վրայի կոծիճները, հապա ոտքին նասըրնե՞րը : Ասոնք ի՛նչպէս եղեր մոռցուեր են : Եթէ Սրբազանը ձեզ բաղնիք մը տանելով, հոն ուղածնուդ պէս անդամազննութիւն մը ընէիք, տակաւին ի՛նչ մտքեր պիտի ունենայիք համրելու և ի՛նչ սուկորներ նկարագրելու : Այս կարգի յաջողակութիւններ եկեղեցական բեմբախօսութիւններու շին նմանիր՝ որ պապանձիք մնաք : 40 տարուան կարդացած Աւետարաններնուդ մէջէն թէ որ վկայութիւն մը բերել հարկ ըլլայ, լեզունիդ կը կապուի և բերններնուդ մէջ չդառնար : Հազիւ հազ ե+ե+ե+ե+ե մը անուշ ատղը կը կապէք : Եւ Ս. գրոյ խօսքերը մէջ բերած ատեննիդ՝ շրթունքներէդ փլած պատի քարերու պէս կը թափթըփին : Քանզի առ Այն ընտրուած չէք :

երբ Հայաստանեաց Եկեղեցւոյ դէմ յա-  
խուռն և անխիղճ յարձակումներ կըլլան՝  
դուք դասալիք զինուորք, ինչ կընէք  
այն ատեն: Վերմակնիդ զլուխնիդ կը  
քաշէք, Յովնանու քունը կը խորդաք:

Գեռ մօտ ատեններս կը տեսնաք և  
կիմանաք որ Գաթըրճեան մը կը հաչէ,  
Մանգակունի մը կը հառաչէ, դուք՝  
վարձկան հովիւներ, տաք արեւուն դի-  
մացը անցած շապիկներնուդ եախային  
ուշիկները կը կոտրէք: Անգիէն Չամուռ-  
ճեան կը գրպարտէ, Յոյսը կը պարտըկէ,  
դուք՝ անզգայ էակներ, մէն մի անկիւն  
քաշուած բաշաներնուդ բիրէները կը  
քրթւրտէք: Քիւրտերը, Աւշարները ժո-  
ղովուրդը կը կեղեքեն, դ՛ուք արխնար-  
բու գազաններ, վանքին դաշտերն ելած  
կովերը կը կթէք: Բարբարոսները ձեր  
աչքերուն դէմ յանդուգն սրբապղծու-  
թիւններ ՚ի դորժ կը դնեն՝ դ՛ուք՝ դայք  
յափշտակողք, ծառաստանները բացօթ-  
եաց տեղեր նստած հեթանոս կը ծեծէք: Քը-  
թերնուդ տակ խժդժական առեւանգ-  
ներ տեղի կունենան, դ՛ուք՝ անզու թ և

անտարբեր՝ պարարտ մատաղներ կօրհնէք ու լըբըռտելով կը ճաշակէք =

Խստասիրտ հարստահարիչներ՝ աղքատին խրճիթը կը վղցունեն, դձուք, անխիղճ և անհոգ, պաղարեամբ հանդիսատես միայն կը կանգնիք =

Սրբազան Հայրիկին դիտուն, մօրուսին ու պեխերուն մազերը համբընուդ՝ ձեր դաւառի ու վիճակի ազգայնաց ցաւագին վշտերն ու թշուառութիւնները թուելով՝ անոնց դարման մը հայթայթելու ջանքը հողացէք, որ ձեր ուսերուն վրայ դիզուած այնպիսի ծանր պարտականութիւններ են, որ երբէք չէք կարող վրանուդ նետել առանց ձեր կոչման դէմ ոճրադործէ մը շատ և շատ աւելի մեղանշած ըլլալու =

Եթէ կուզէիք այդպիսի խայտառակութեան տիպար մը եղող հրատարակութիւն մը՝ ի լոյս ընծայել՝ զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, թող ձեր կենսագրութիւնը հրատարակէիք, ուր ամենայն ինչ կատարեալ է . . . . Բայց իմ ծիծաղս ձեր

վրայ աւելի շարժող կէտը այն է թէ՛ կամ ուր ուրեք և իցէ Աւետարան քաջոզելու պաշտօն կըխնդրէք, եւ կամ վանք վերադառնալով՝ հոմոֆար պաշտօննիդ վարելու արտօնու թիւն մը կուզէք :

Շատ բան, ջեմ գիտեր թէ այս վերապատժելի ճիւղաները որ հեթանոս ազգաց մէջ քարոզու թեան դացին՝ ու ետեւնուն մարդ դրկուելով ետ դարձուցին, Որ ժամանակ միամտարար պաշտօն վարեցին, ու անանց ազօթ քներն ու մաղթանքները բռնարարուեցան :

Մեր առաքելական նուիրակները՝ աւելի ջինուամաշխի երկնային խոփանքով պաշտօնեայներ՝ քան թէ երկնից ճշմարիտ արքայու թեան աւետարանողներ՝ հերիք չէ՞ որ մինչև հիմա պաշտօն, պատարագ ըսելը՝ պատարագ, պատարագ հասկցեր են :

Մինչև երբ կուզեն որ յանուն վարդապետութեան ազգը խարելով՝ անոր արիւնը ծծեն :

Անցան, անցան այն ժամանակները :  
Ներկայ դարուս մէջ յարգը՝ իրական

արժանիքներուն է, և ոչ թէ սուկ տխուր  
զոսներու տակ ծածկուած մարդամեքե  
նաներու : ]

Հին ատենները՝ մէկ վեղար մը 40 վար  
դասպետ մէկէն կրնձայէր, բայց հիմա 40  
վարդասպետ մէկտեղ գալով՝ մէկ վեղար  
մը հազիւ թէ կրնան յօրինել :

Մենք՝ եկեղեցւոյ ճամբարիս հովիւներ  
ըր կը սիրենք, կը յարգենք և անանց  
պատուականութիւնը ոգւով չափ կը ճանչ  
նանք : Սակայն ձեզի պէս ամբարիշտներն  
աչ հրատարակաւ կշտամբելու ամենեւին  
խիղճ չենք ըներ :

Եւ ի՞նչպէս ամբարիշտ չկոչեմք քրիս  
տոսի այն հեշտ աշակերտները՝ որ մինչեւ  
իսկ Ս. Հայրիկի նման անպուգական անձ  
մը ձրի զրպարտութիւններով նշաւակել  
կը յանդգնին :

Ս. յն անձը կրտեմ, որ ընդ հանուր ազ  
գին երկու աշացը լոյսն է, սեւազքօղել  
կը շանան անպուր լրբութեամբ :

Չգործած մեղքերու թողութիւն մը :  
Հայրիկը՝ Մշոյ միաբանութեան գլու  
խուն շատ չարիքներ հատուցած է եղեր :

վանքը, քանդեր, կործաներ, հիմնայատակ  
ընելու մաղ մ'է մնացեր, ու անոր գոյքը  
և կալուածները վատներ, փճացուցեր և  
այս հաստատութեան իբրեւ գլխաւոր  
Միւններն եղող Եսայի ու կարապետը՝ մո-  
խիրի վրայ նստեցուցեր է :

Ենթադրենք թէ՛ կէտ առ կէտ իրա-  
ւացի բողոք մը եղած ըլլայ — այդ ամեն  
ըսածներնին — , թէ իրաւցնէ վանքին  
Եօրի-Տճէկի-Երը քանդած ըլլայ և միաբանու-  
թիւնը շատ վրայ նստուցած :

Արծաթները ժողված, ոսկիները տոպ-  
րակը լեցուցած, պղինձները համբառ-  
լանմիջ բրած . . . . .

Այս լացն ու ողբումը նիւթական հա-  
րստութեանց վրայ միայն ըրած ատեն-  
նին, ինչո՞ւ չեն ցոյց տար՝ որ այս ինչ  
բարեկարգութիւննին խանգարած, այն  
ինչ դպրոցներնին գոցուած, տպարան-  
նին ցրուած, թանգարաններնին կործան-  
ուած, երկասիրութիւններնին այրուած,  
ձեռագիր մատեաններնին յափշտակուած  
ըլլալը : Ես ալ ի՞նչ կըսեմ, ատոնք ո՞վ  
ցաներ է որ, ո՞վ քաղէ :

Երանդ կը տեսնեմ, ի՞նչ կընեմ: Չնա-  
ջի՞ն, ապոնք այն տեսակ բարոյական պի-  
տոյքները ծալլած ընդ դրած են, վան-  
քէն ներս՝ արժաթները կուլան, դուրսը՝  
ոսկին ու դրամը կողքան. հաշուեցու-  
ցակնուն մէջ՝ ծախսի գումարը կ'ար-  
տասուեն. նուիրակութեան պաշտօնի մը  
նիւթական արդիւնքները կը հողովեն:  
Վերջապէս հանքարանութեան վրայ ա-  
մենուրեք ՚ի ձուոյ ճառելէն չեն կշտա-  
նար մեր այս կուսակաշտից քուրմերու  
թուան թուները:

Այս պինդ երեսութեան շրջանին մէջ՝  
կեղնեն Ս. Հայրիկին խնդրագիր մ'ալ  
կուտան, ուր կը խոստանան թէ՛ ինչ որ  
իրենց ըսուի, կամ ինչ գործի որ ղիրենք  
դրուի՝ ամենայն հնազանդութեամբ պատ-  
րաստ են, ՚ի մահ և ՚ի կեանս:

Կեցէ՛ք, այդչափ առաջ մի՛ վազէք:  
Մշոյ դաշտերուն մէջը չենք՝ որ շտապով  
վանքին ձիերը ճաթեցունէք: Ես ցօն  
մը մահուան կը պատրաստուիք,  
երբ փոքր ինչ կշտամբանաց անգամ չէք  
ուզեր տանիլ:

Դեռ խորագանին ծայրը չտեսած՝  
հաւատքնիդ ուտելու ելաք՝ ասկերախո  
ուրացողներ :

Եւ տակաւին ի՞նչ խաղեր պատրաս-  
տած ունէիք արդեօք խաղալու՝ եթէ  
առնուած ու մօրուքնիդ համ-  
րուած չըլլար : Եւ եթէ վարչական շրջա-  
հայեացք արժնութիւնը՝ ձեր ակումները  
մէկիկ մէկիկ քաշելով՝ ձեր զլխուն այն  
անտէնկալ հարուածը չի տար, որ ձեզի  
աղկ՛օդ տէ, ձեր արբանեակներուն ալ . . . :

Եւ ի՞նչ է այն երկրորդ կէտն ալ՝ որ  
դործի մը գրուիլ կ'ուզէք :

Եթէ Պատրիարք մը՝ ձեզի համար  
Ֆասրիդաթօր մ'է, որ մեքենաներնիդ  
ձուլելու համար ուղածնուդ պէս ձեզի  
մէյ մէկ տեղ պատրաստէ :

Դ՛ուք, որկորապաշտ Ծարաներ, եթէ  
բաւտիստանայրութեամբ և եթ ապրիլ ու-  
ղէիք, եթէ ձեր կոչման համեմատ խղճի  
մտօք պաշտօն միայն վարել ըլլար փա-  
վաքնիդ, աղղին մէջ ձեզի ոչ հաց կը  
սրակսէր ուտելու և ոչ տեղի աղօթելու :

Դ՛ուք, անարժանաբար Սէւտարանի

ուսուցիչ անուանեալներ, կրօնից դիմակ-  
ներ, հաւատոյ դերասաններ, բարոյա-  
կանութեան խաղալիքներ : Չէ՞ք կար-  
դար, այն Աստուածային պատգամը թէ՛  
« Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չա-  
քաչար խնդրէք » :

Եւ ինչո՞ւ կը զայրանաք աներեւոյններ,  
Ս. Հայրիկին քով երես չունենալնուդ վրայ :  
Ո՞չ ապաքէն նա լաւ կը ճանաչէ իր ձա-  
խակողմեան աւազակները : Փորձեալն՝  
կրկին փորձելը յիմարութիւն չէ՞ մի :

Վկայ նոյն իսկ ձեր այն խօսքը՝ որ  
լկտօրէն կ'ըսէք սրիկայական տեսրակ-  
նուդ մէջ, թէ « կը կարծէինք որ Պօլսոյ  
մէջ կարմիր ոսկիները կարկուտի նման  
մեր գլխուն պիտի տեղային » :

Այդ ուիշտ երեւակայութեամբ չէի՞ք  
վախնար, որ եթէ իրօք այնպէս ըլլար՝  
գլուխնիդ ջախջախուելու և պատուելու  
վտանգի մէջ պիտի մնար :

Բայց ինչո՞ւ վախնան, գոնէ գլխեր-  
նուն ինչի՞ն ձեռք մ'ալ աւելի բացուած կըլ-  
լայ՝ քանի մը « զանազան կարմրուկ ալ հոն տե-  
ղաւորցնելու համար » :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԱՆՈՐԴԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Սուրբազանին սկզբանցը համեմատ թէ որ ըսուելու ըլլայ ձեզի, դժօխք կերթա՞ք. «Մօռէ այլըդ դա՛ն կըռօշ» ըլլալը կը հարցունէ՞ք :

Երկու ձեռքերնին ճակատնին դնելով հրապարակաւ աշխարհի հրաժեշտ կարդացող՝ այս երկու ամբարիշտ խաբուսիկները, արժաթամոլ Սլպանացիէն ի՞նչ վար կը մնան, երբ իրենց չար և անզուսպ կիրքերն շահամոլութեամբ ցածուցանելու համար՝ մինչեւ իսկ իրենց ներքին մարդն չարաչար և անխնայ սպաննած ատեննին՝ «Մօռէ կէնէ եազրդ կուռշունէ» կըսեն :

Ձեր անձին նկատմամբ յունկանէ լրսուածները՝ դուք ինքնին՝ ՚ի վերայ տանկաց քարողեցիք :

Վարքերնիդ և բարքերնիդ ի՞նչ ըլլալը գրաւոր վկայականներով ազգային աւանդեցիք :

Սյդ նորատիպ ազուեստամատենիկով մշտաբարբառ արձան մը կանգնեցիք, վրան ալ թիւյ մը տնկեցիք յաջորդ դարերուն փողփողելու համար թէ՛ ար-

դարեւ սրբուած է ամօթը ձեր երեսէն և  
օծումը ձեր ճակտէն :

Ձեր բարոյականութեան հայելին այն-  
պիսի հաւատարիմ կերպով ստորագրած  
էք յանգէտս, որուն մէջ ամեն գաղտնա-  
ծածուկ դաւադրութիւններնիդ յայտ  
յանդ իման նկարագրուած կը տեսնուին :  
Վասն զի չիք ինչ ծածուկ, որ ոչ յայտ-  
նեացի :

Ո՛վ կարող էր ձեզ այնչափ վատահամ-  
բաւել, որչափ դուք զձեզ վատահամ-  
բաւած էք՝ ամբիծ և անարատ անձ մը  
հրապարակագոյժ ընել կարծեւրով :

Տիղմերը՝ որչափ ապականիչ ալ ըլլան՝  
դարձեալ կրնան աղամանդի մը բնա-  
կան յատկութիւնը ու սեպհական ազնու-  
ութիւնը կորսնցնել տալու չափ զայն աղ-  
տոտել :

Չէ՛, չեն կրնար :

Ինչպէս չեն կրնար նաև արդարա-  
նալ ձեր գործած նախճիրները՝ պատմու-  
թեան առջև, թէև հազարումէկ ջատա-  
գովական քրտնալիւծեր ալ ունենաք :

Կը վատահեցնեմ զձեզ, որ յայտուհե-

տեւ ամենեւին ազատ էք, աներկեւան խիզախելու, թշնամանելու, խօսելու, գրքելու և գործելու, ինչ որ ձեր բնութեան և ճաշակին յատուկ և վայելուչն է:

Ձի այն օրէն ՚ի վեր, յորում ձեր նախնի պատկերը տպագրական լուսանկարով հասարակութեան ընծայեցիք, կենդանի մեռեալներ էք ողջմտութեան առջեւ:

Հայ աչքերը շատ տեսած են ձեզի պէտազգութեան, կրօնիւ հայրենեաց նախատինք վասակներ, Մերուժաններ, Սուրմակներ, Շմուէլներ, վեոտ Սարգիսներ:

Գիտեմք, որ երկրիս վրայ որչափ մարդկութիւնը տեւէ՝ այնչափ մարդկային հրէշներն ալ պակաս չպիտի ըլլան, առաքինի անձանց յարդն ու պատիւը աւելի փառաւոր ընելու համար:

Գազաններուն ամենն ալ պոյնուզ շեն ունենար եա:

Կրից բորբոքը՝ այն աստիճան սաստկացած կ'երեւնայ ձեր սեւ արեան շրջանին մէջ, որ ամեն սահմաններէ դուրս ցատկելով՝ ընդհանրութիւնը ձեր մաս

Նաւոր նախանձուն և ատելութեանը անպատկառ կը զոհէք, բարբանջելով թէ՛ «Խորիմեանի ընտրութեան ատեն խենդութիւնը՝ հասարակաց էր » :

Ի շնամական հեռ կուրութիւնը՝ որչափ պաշարած է միտքերնիդ ու ոգինիդ, որ Գրիգորեան Մ. վարդապետը՝ Ս. Պատրիարքին ընդդէմ ծիծաղ շարժելու շնորհք մը քաղելու մտօք քրժնութիւններ ընելուն վրայ Բաղաամեան մարդարէութիւններ ըրած ատեննիդ, առջեւնիդ ձեր ձեռքով բացուած մերկանդամ ստութեան խորխորատը չէք նըշմարեր, ուր թաւազլոր դահապէժ ըլլալով՝ աչքերնիդ, ունկերնիդ կը պատռէք Բացատրենք :

Դուք կ'ըսէք թէ՛ սրբազանը երեսով կեղծել և սրտիւք չարիք խորհել լազիտէ : Միանգամայն ձեր առասպելաբանութիւնը կը շարունակէք պատմելով թէ՛ « Երբ իրեն ներկայացանք՝ խոժոր դէմքով մի մեզ հայեց, որոյ կանանչ չինիի համատիպ եղող պտուղներէն շանթ և կայծակ կը թարթափէր » :

« Թողումք ասել՝ զկորոտայրն, զգո-  
ւայրն, զգիււահարեւն, զփրփրալն, և  
զայլ բազում զայրագին գոչումներն որոց  
ոչ գոյ թիւ ։

Սա հակասութեան քառսին մէջ՝ մէկ  
աչքերնիդ լայ՝ մէկը խնդայ, այս երկու  
ստութեան կամ զրպարտութեան մին  
անպատճառ պէտք է խոստովանիք ։ կամ  
Սրբազանը՝ երեսօք կեղծել չգիտեր՝ որ  
զրպարտած էք, կամ ձեր վրայ ոչ աչքե-  
րը խոլորցուցած է և ոչ դէմքը լեւոտեցու-  
ցած՝ որ ստած էք ։

Սա երկու տեսակ հաւերտան սրը կ'ու-  
զէք կլլեցէք, ապա թէ ոչ ձեզի հանձնելի  
կ'ընենք ։

Այլ առակ լուարուք ։

Երբ Սրբազանին կը ներկայանան՝ խո-  
նարհաբար յետս յետս գնալով՝ մէկ մէկ  
աթոռի վրայ խասխաթի (1) կ'ըլլան՝ խոստան

---

(1) Արդարեւ կ'ուզէի հոս անարգական  
բառեր գործածել ։ Ատոր համար չեմ սրբա-  
նար ։ Բայց չեմ ալ ուզեր որ մեր անպիտան-  
ները՝ այս խոստանի բառը՝ իբրեւ նախատա-

նայելով Բաղնաս ակնածո-խեմոսի, և առանց աչքերնին վեր առնելու՝ յորազանին գրլխէն մինչեւ յօտս մաղերը կը թուեն, կը ձեւեն, կը չափեն, և այնպիսի մանրակրրկիտ սուր տեսութեամբ կը նկարագրեն, որ տակէրօտիպը կը հիացնեն:

Ծխախոտի բաթեթը՝ լաւ մը կը դըննեն, ու անկից ելած ծուխը՝ Ֆիզիգական, բնազանցական, երկրաչափական և մաթեմատիզական հաշիւներու տակ կը ձգեն, ծխամործի վիճակը, դիրքը ձեւն ու կացութիւնը կը քննադատեն և այս

---

կան նշանակութիւն ունեցած կարծելով՝ իրենց բերնի խօսքերուն կարգը ինչ բան ունենալուն վրայ դարմանան. զի այս պարբերութիւնը՝ իրենց գրուածքէն քաղուած՝ հաւատօտութիւն մ'է. Թող գիտնան ուրեմն, որ այս բառը ճիշդ նստիլ կը նշանակէ՝ Յուարէն + աջի + աջօ բառէն ելած, որ «նստէար» ըսել է:

Աս.՝ այնպիսի աղճատեալ բառ մ'է, որ անկերէնի եւ ռամկօրէնի մէջ միանգամայն նխտիր կը գործածուի, ասոնց պէս ալ ինչպէս անձերու համար:

ամենը՝ առանց աչքերնուն պոչովն ան-  
դամ նայելու, և ՚ի նշան ակնածութեան  
գիտէք ի՞նչ կրնեն (խօսէ Տառակ, խօսէ,  
բերնիդ քիրա՞ կուզես) :

« Կարապետ վարդապետը ձեռքը պե-  
խերուն տարաւ ոլորեց, հագեց, հըն և  
ասեց, « շն՝ + շն, և « շն՝ ի՛նչ. « շն՝ յն՝ յն՝ »  
և « շն՝ քն՝ քն » :

Ահա՛ և խօսք ձեր իսկ յայտ առնեն,  
դի և դուք ՚ի քրթաց անտի նոցա էք :

Հոս ակնածութիւնը՝ իր քրդային  
մեկնութեամբը լրբութիւն նշանակելու է :  
Խարդաւանութեան օրինակ մը :

Սերաստիոյ վիճակէն հաւաքած ստակ  
ներնիդ Պօղոս պատրիարքին ամենայն  
հաւատարմութեամբ և որդիական հնա-  
զանդութեամբ յանձնելուդ վրայ Ս.  
Հայրիկը ձեզի աչքա՝ դանգասներ ուղ-  
ղած ատեն տեսէք կեղծաւորք, թէ ի՞նչ  
կը պատասխանէք :

(Կարապետ), « Այն ստակները Պօլիս  
Մուխաթայի տուեցի և Պատրիարքին  
ինձ տուած ստացագիրն ալ վանական  
Ժողովոյն արդէն տուած եմ, որուն ա-

տենապետ և ատենադպիրն ալ ձեր ձեռնասուն և ծոցասուն աշակերտ՝ Գարեգին վարդապետն էր ։

Եթէ ձեռնասուն վարդապետ մը՝ ծոցասուն ալ պէտք է ըլլայ, դուք որոնն էք արդեօք ։

Ինծի մնայ նէ՛ մէկ կողմէն ձեր երկուքի մտերմութեանը ու իրարու հետ սենեցած սերտ կապակցութեանը նայելով, և միւս կողմանէ ընութեան ձեզի շնորհած յարմարագոյն տրամադրութիւնները նկատելով՝ խիստ հաւանական է որ այս մասին օտարի պէտք չունենաք ։ Մէկ զմէկու ձեռնադիր և ծոցասուն կրնաք ըլլալ, ինչպէս և եղած ալ ըլլալու էք, եթէ ասի՝ ձեր օրինաց վարդապետութեան մէկ անժխտելի յատկանոնն է ։

Ա՛հ, լաթերով սատանաներ, փիլոն հազած կատուներ, ի՛նչ մեքենական հնարագիտութիւններ կը պարունակէ այս կէտը ։ Կէտ մը, որ մէկ հասիկ թարգման կրնայ կանգնիլ ձեր ամեն ելլալի գնացից ։

Բայց նախ՝ այս կտորին վրայ մեր

յարձակման իրաւունքները պարզենք ,  
 և ապա տոպրակին երեսը վրան դարձու-  
 նենք :

Արդ՝ ինչո՞ւ յանիրաւի նախատենք վա-  
 նական մը՝ որ իր վանահօր հրամանաւը  
 նուիրակութեան ելլելու դժեւ, պաշտօ-  
 նին յանձնառու կըլլայ :

Ինչո՞ւ մեղադրենք վարդապետ մը՝ որ  
 Կ. Պօլսոյ Պատրիարքին կամացը կըհնա-  
 զանդի (Ստուած պակաս չընէ ասանկ  
 Հնազանդ տուտուները), այնպիսի պար-  
 տականութիւն մը ճանշնալու համար, որ  
 եթէ մերժելու ըլլար՝ մինչեւ հիմա շա-  
 տոնց քօյնին մէջ ոսկորները պիտի փրտ-  
 տէին :

Այս չէ՞ խնդրոյն արաաքին կեղեւք  
 մատրապաղներ :

Իսկ ներքին պարտաւորութիւններէնք մէկ  
 անգամ՝ և տեսնենք թէ ի՞նչ թիւնաւոր  
 հիւթեր կը պարունակէ իր մէջը : Ասոր  
 համար ալ երկար աշխատութիւններ  
 պէտք չեն :

Ընթերցողք կրնան ինքնին իմաստա-  
 սիրել հետեւեալ հինգ հարցումներէն ,

որոնց մէջ կամփոփուին համանգամայն պատասխանիք և վճիռ :

1. Պօղոս պատրիարքը ինչէ՞ն պէտք էր գիտնալ՝ որ Սեբաստիայէն իրօք բաւական ստակ ժողոված էիք :

2. Ի՞նչ հաշւով կրնար իմանալ՝ այդ գումարին որքանութիւնը, և իր առնելիքի հէվալէին թրփաթրփ գալը :

3. Ո՞ր հօգւով կարող էր մարգարէանալ առդ գումարը ձեզ մօտ պատրաստունեանայնիդ :

4. Ի՞նչ իրաւամբ կրնար ձեր վրայ բռնանալ մուգաթայի մը պարտք ձեզի հատուցանել տալու համար :

5. Ի՞նչ սլատասխանատուութիւն կրրնայիք այս պատճառաւ ձեր վրայ հրաւիրած ըլլալ թէ նիւթապէս և թէ բարոյապէս :

Գիտէ՞ք, քանի քանի՞ քսու ակնկալութեանց և ինչ ինչ օգդ ապազութեանց ենթակայ է ձեր այս վնասնիւնը, որուն հէմ ալսն բիւշման, հէմ սաթան :

Հիմա տեղն է որ մամուս տարուան մնացած առած մը կայ՝ անիկա քչենք :

Գողը՝ գողէն գողացաւ,  
Աստուած տեսաւ զարմացաւ .  
Տէ՛օ անիրաւ պրզպրզուկ,  
Պօղոսն ուսկից իմացաւ :  
Շամախսուլուպի Փասլրիքայի խու-  
մաշներուն թախլիտը հրաշք մ'ալ :  
Իսլանու գիւղի անցքը, Մշոյ աշ-  
խարհի խռովութիւնը, Ս. կարապետի  
վանից մէջ պատահած աղետալի յեղա-  
վոխութիւնը մէջ բերելով Ս. Հայրիկի  
Խաչ-Խիւղ, հողւոյ Խաչ-Խիւղ, բարոյա-  
կանին Խաչ-Խիւղ, վերջապէս եօթնէն  
անդի յանցող մեղքեր, այս ամենայն չար-  
եաց եղելոց պատճառ համարած և ան-  
ժիտելի ուղղորդելով հաստատած միջոցին՝  
Ս. Հայրիկը ասոնց մէջէն առանց հովիտ  
մը՝ որ նշանախեց մի է, կարենալ ուրա-  
նալով՝ իբրեւ զլլման դաւանութիւն ա-  
մենամտադիր լուծեամբ կէտ առ կէտ  
ընդունելով կապասէ, որ խոստովանահայր  
վարդապետը դաւանանքը վերջացնէ . և  
ի վերջոյ Ս. Հայրիկը մեղսաշարին դաւ-  
նալով՝ իբրեւ անձ մեղայ Աստուծոյ այսպէս  
կը պատասխանէ :

« Տօյ անիրաւ , հապա դու քո արած չես ասեր » :

Տետրակին մէջ մէկ քանի հարիւր տող բան շարունակուած կը տեսնամք , իբրեւ Սրբազանին երեսն 'ի վեր լրբարար ամբաստանուած այնպիսի մեծ պահքէն երկայն լպիրշ լուտանաց շարք մը՝ որուն դէմ պարզ ունկնդիր մը անդամ անհնար է որ անտարբեր լուռ կենար :

Բայց հրաշք մը ինչեր չգործեր :

Կ'ըսուի թէ՛ գիշերանց գողերը տուն մը մտած ատեննին , քնացողներուն վըրայ մեռելահող կը ցանեն , որպէս զի քըներնին թանձրանայ՝ մինչեւ որ իրենք գործերնին տեղաւորցնեն : Կամ որ նոյն է : Օգգապաղները եղջերափողի հընչման ոյժովը «էյրճիներ» աչքերը կը կապեն , որպէս զի իրենց խաղին պատրանքները չյայտնուին :

Արդեօք , սինեօր Եսայի և կարապետ տիրադաւները՝ ինչ հնարք բանեցուցած են նոյն միջոցին որ Ս . Հայրիկը՝ աչս ունի՛ և ոչ տեսանէ , ականջս ունի՛ և ոչ լսէի պէս սուսիկ բուսիկ նստեր ժամե-

բով ասոնց անլուր հայհոյութիւնները մըտիկ կ'ընէ առանց քիթն անգամ խընջելու :

Կարծեմ դէշ չըլլար՝ եթէ նոյն զրախօսութեան համառօտագիծ պատկերը հոս դնելու ըլլանք՝ ընթերցողաց յայտնելու համար անանկ մեծ առասպելահիւս ստութիւն մը՝ որ եթէ իրաւ ըլլար, արաստոյ քարերն իսկ պիտի ճաթէին :

Լսենք ուրեմն և 'ի միտ առնենք :

« Հայրիկ, երբ մենք իզմիր գնացինք, հոն ալ քէօ մատ խաղցուցիր . . . »

« Խարէտ թեամբ մեզ վանքէն դուրս հանեցիր՝ որ խաղդ խաղաս . . . »

« Կարելի՞ է բան էր վանք դառնայինք, որ ձեր ներկի կարասը կոտորուէր . . . »

« Կարապետ վարդապետէն տեղեկացանք (մէխանաճիին շահիտը՝ պօղաճին) որ ձեր Սրբազնութիւնը՝ թմբուկը ձեռքը առած, ամեն օր վանքի միաբանութեան հետ ջուռը կը խաղայ և վանցի տղայոց հետը փատուկը . . . »

« Զեր Սրբազնութիւնը՝ Պօլսոյ Պատ-

ընդհանուր որոշուեցաւ, չեմ սխալիլ ասել  
ոչ այնքան բաղդի և յաջողութեան մի-  
ջոցաւ, որքան Հայ Ժողովրդոց անվոյ-  
թութեանս. մեղքը փանոսեանի ճիտը,  
(ապաճի քէպէճի, փանոսեան նէճի) ընդ-  
հանրիցի համողումը յարգել պէտք է  
ղաւ, վասն զի խենդ ու թիւնը հասարա-  
կաց էր (Հասանին քիւֆիւրը՝ հիմայ հոս-  
խունկի տեղ չա՞նցնիր մի) ապա թէ ոչ  
փոքր բան էր, որ ձեր Սրբազնութիւնը  
գէպ ՚ի Պօլիս եկած միջոց՝ կարին քա-  
ղաքի մէջ գտնուող Դիոս և Հերմես կը-  
ռոց քուրմերը՝ ձեզ գիմաւորելով Պօղո-  
սին և Բառնաբասին չզոհած մատաղները  
ձեզ կը զսէին, (աչու ընիդ կօզիկ օղ-  
լուն չէյտէմինչը ըլլայ) և Պոնտոս հա-  
սած միջոցը՝ Պոնտացի կոյսերը և երի-  
տասարդները (ձերերու հետ կարծեմ  
բնաւ գործ չունիք) ոստովք և ձիթեն  
եօք՝ ոլոսաննայ ասելով՝ ծաղկազարդի օս-  
նը՝ նոյեմբեր 24 ին կատարեցին. (համ-  
բերութիւն կը մաղթեմք Հայրիկին) և  
Պօլսոյ երիտասարդները (կէնէ՞մի գայ-  
մաղ) խաժամուխ բազմութիւն (բիւֆն

էք կերեր) ձեր դիմաց ելած նոյն անձ-  
րեւին միջոց՝ երբէք կարելի՞ բան էր՝ որ  
սուրբ աստուած, սուրբ հրեշտակ, սուրբ  
աւերիչ՝ սուրբ կարապետի վանից, որ  
հարեր կործանեցեր (վիշապներու գը-  
լուխն ջախջախեցեր) և բարձրացար յա-  
թոռն Պատրիարքութեան կ'երգէին ։  
Բայց անոնցմէ այն խուռն բազմութեան  
բորոտներէն (դուք քան զամենը գոստ  
և խոցոտ) և ոչ մի մարդ ձեր երանա-  
կան շնորհաց հաղորդակից ելաւ և ձեր  
Սրբազնութիւն՝ ոչ առ այլ ոք առաքե-  
ցաւ, բայց առ վարսադեղ վարժուհին  
Պոնտացի, որ Պոնտոսէն հետդ բերելով՝  
(չ'ուշ աւանակներ, չ'ուշ, չ'ուշ) դրած  
էք պեկնոտ երես ժամկոչ Մարգարին  
տունը՝ (հիմայ Մարգարը մեռաւ, պէք-  
ճի մը պէտք է կրլլա՞ք) որ յաճախ Պատ-  
րիարքարան գալով՝ ձեզ պաշտում է յա-  
մենայն անձնէ իւրմէ և յամենայն զօրու-  
րութենէ մտաց իւրոց (որդնալից լիցի  
այն գարշելի բերան . . .) ։ Մի ամիս ե-  
ղաւ՝ Պօլիսը եկած բարձր լեռը չմնաց՝  
որ Գողգոթայ չերեւակայեցիր, նաւա-

տորմիղները՝ երկան և հաստ գերան չը մնաց՝ ամեն օր խաչ կեղնես, հայեր ձեր փառաւոր յարութեան կ'սպասեն, թե՛ ըես իրենց յոյս դէպ 'ի աղատութեան և հողւոյ փրկութեան գազաթը վերածես (ասի կայիափային մարդարէութիւնն է) ջրաղացն ի՞նչ մտքի, ջրաղացսան ի՞նչ մտքի . . . : Հայերը ի՞նչ կը յուսան ձեզմէ. դուք ի՞նչ խելքի կը ծառայէք . . . » : (Ս.յս ալ Յուդային մատնութիւնն է) :

Ո՞վ կը հաւատայ որ ասոնք՝ իրաւցնէ ըսուած և լսուած բաները ըլլան : Քիչ մը բնական խելք կօզտէ հասկնալու համար թէ ի՞նչ շինովի առասպելաբանութիւններ են ասոնք, և ի՞նչ հողւոյ տէր մարդկանց վիժած ստորոգելիք : Բայց և այնպէս այն արդար և փիլիսոփայական խօսքը՝ զոր Հայրիկին բերանը դրած էք-թէ և բոլորովին սուտ է և զրպարտութիւնմեր և բոլոր ընթերցողաց կողմէն ձեր ճակատին զարնելու համար, կրկնելիք պատասխաննիս է թէ՛ դուք անիրաններ, հապա ձեր ըրածներն ու թողած-

ները չէք ըսեր: Գ՛ււք, որ զայլս կամ  
բաստանէք, կը գատէք, և բարոյապէս  
'ի մահ կը մատնէք, յի՞ք են արդեօք ձեր  
գործերն ու արարքը: Հայրիկը՝ գոնէ  
ձեր մարդկօրէն մէկ սխալա՛նքն ալ չք  
գտաւ որ ձեզի յիշեցնէր այդ երկարա-  
պատում՝ բաշաղանաց միջոցին՝ երկւոր-  
եակ Հրեշտակք 'ի մարդկանէ . . . :

Գոնէ չմտածեցի՞ք մէկ անգամ որ հը-  
րատարակութիւն մը՝ որչափ անճոռնի,  
փցուն և գծուծ ըլլար՝ դարձեալ անշուշտ  
հետաքրքիր ուշադրութենէ չկրնալով  
վրիպիլ՝ պիտի խայտառակուէր հրապա-  
րակաւ օր մը՝ ինչպէս այսօր խայտառակ-  
ուեցաւ այն գիտաւոր ստութեամբ իր-  
րու թէ զամենայն բանս այսօքիկ ասա-  
ցաք տու սեամ դրանն պատրիարքի՝ և  
նա լուեաց, ծան չխան:

Էյի եալան՝ սլու եալան, Ֆիլի եութ-  
թու պիր երլան:

Շապիկ փոխենք:

Դուք կրօէք թէ Ս. կարապետի վա-  
նից Ս. ոսկին կարին Պօղոսի կին կերաւ  
և մարսեց:

Թէ որ վանքը՝ իրաւցնէ այնչափ ոսկի ունի որ այս տեսակ շռայլութիւններու անգամ դէմ կուտայ, դուք, գող և աւազակներ, ուրեմն ի՞նչ խղճով ասդին անդին նուիրակութեան կ'ելնէք խեղճ ժողովուրդը կեղեքելու, այնպիսի արուեստակեալ ձեւերով՝ որ մուրացկաններն անգամ կը սօթտէք:

Վերջին անգամ Զմիւռն, Պօլիս և Մօլտօվալաքիայի կողմերը շրջագայած ատեննիդ՝ այդ ճշմարտութիւնները որ հիմայ կը խոստովանիք, թէ որ ժողովրդին ալ վեհա՛նքար քարոզած էք, ալ ինչո՞ւ ուրեմն արդեանց սովէն տաղնապելով կը տրտուաք, ժողովրդոց կրօնասիրութեան, ազգասիրութեան վրայ, և յանիրաւի կը բամբասէք ազգին նկատմամբ ինչ ինչ բնաւորութիւնները՝ զոր դուք կ'ստեղծաբանէք օրինակը ձեր անձէն միայն առնելով: (Ալէմի նա՛սրլ պիլիբրսին, — գալպիմ կիպի):

Կամ ազգին վրայ բարդած այդ ձրի գրպարտութիւններնիդ սուտ է, և կամ վանահօր մը շռայլութեան վրայ բրած

ամբաստանութիւննիդ :

Սոյս երկու կէտին ո՞րն ալ ըլլայ նէ ըլլայ, դ՛ուք լեռան վաստակներ, ամենեւին չէք կրնար ինքզիքնիդ արդարացրնել :

Ո՛ր կողմը դառնաք, դարձեալ տիղմերու մէջ թաթաւելէն զատ՝ ուրիշ ճանապարհ մը չէք կրնար գտնալ, ճիշդ այն ծովամոյն եղողներուն նման՝ որք որչափ ալ իքներուն հետ մաքառին, այնչափ անդունդը աւելի շուտով գահավիժելու վտանգը կը վաղվաղենք :

Բանդագուշանք մը :

Քիչ մը յառաջ՝ Սրբազանին թէեւ շատ ըսելիքներ, կ'ունենան, բայց կը լըռեն, ինչու որ միջոցը չէր ներեր կ'ըսեն : Ետքերը՝ միջոցներու չեմք գիտեր ինչ փոփոխութիւն կ'ըլլայ՝ որ մինչեւ իսկ եալը — չարխընիի հայհոյութիւններ բերնեղնուն անխտիր դուրս ժայթքելու ամենեւին երկիւղ մը չեն կրեր :

Ասանկ աստիճաններ ունենալու համար մարդ քրթերէ պատուաստուած ըլլալու է . . . , որ միլիոնաւոր ժողովաբոյ ներ-

կայացնող Պատրիարքի մը երեսն 'ի վեր  
երբայեցարար բաշաղեն, « վայ դայ Հայ  
ազգի գլխին, որ դուք էք Հայ ազգի  
Պատրիարքը . . . . : (վայը ձեր գլխին,  
ձեզ ձկնողին, ձեզ կաթ ջամբողին, ձեր  
ոտքերն առաջին անգամ վանքէն ներս  
խօթողին) : Եւ դու Հայրիկ՝ պիտի մեռ-  
նիս, դու որ շատ մարդիկ 'ի զուր զոհե-  
լով՝ խոր գերեզմանի գիրկը գլորեցիր,  
նոցա կեանքը ցաւօք և հեծութեամբ » :

Եթէ այդ՝ այդպէս ըլլար, դուք մին-  
չեւ հիմայ շատոնց գերեզմանական Խոր-  
խօթի պէտք է ըլլայիք :

Դուք ինչո՞ւ ապրիք՝ ծնունդք իժից,  
բնութեան ժանտախաներ :

Թող մնան կ'ըսէ գերագոյն հեղինա-  
կութեան մը անսայթաք օրէնքը . — Ս-  
տանկները՝ 'ի յաւիտենից արգիլեալ ա-  
պաշխարող մարդկութեան շղթայները  
կրծող մուկներն ու օձերն են : Թողնելու  
է որ կրծեն :

Հետաքրքրական :

« Սրբազանը դառնալով դէպ 'ի կա-  
րապետ վարդապետ՝ ծօ անիրաւ, դեռ

կը խօսիս, հըն, խանէմ, խանէմ, և ձեռքը տանելով դէպ 'ի գրապան, խանէմ, ինչպէս ես խանէմ. վարդապետը ըսաւ, ծօ՛ տէհ, հանէ տեսնենք, ի՞նչ է հանածդ, որ կը բղաւես տա՞նձ է թէ խնձոր. Սրբազանը դարձեալ դուայ, — Հանեմ թէլէկրաֆի թուղթը՝ որ Մշոյ բէյիսներուն հետ միանալով՝ թէլը քաշեցիք, Տեղապահ Արիստակէս եպիսկոպոսին թէ՛ մենք խրիմեանը՝ մեր երկրին և վանքին առաջնորդ չենք ուզեր, չէ՞ ըստորագրութիւն է դրուած թէլի թուղթին մէջ, ինչպէս ես որ խանէմ գուրս, հան ըսաւ վարդապետը, ձեր սուտը, ուղիղը՝ այդ տեղը յայտնի կը լինի : Տէհ, հանէ, տէհ հանէ տեսնենք իմ ստորագրութիւն կայ ան թղթին մէջ՝ թէ ոչ, ես նոր ձեզ հետ կը խօսիմ : Սրբազանը տեսնելով որ իր ստութիւնը պիտի խայտառակի, վասն զի վարդապետի ստորագրութիւնը չկար թէլի թուղթին մէջ. մէկէն խօսքը փոխեց, է՛յ ըսաւ, դու չէիր բէյիզներուն դրդող հա՛ն, — վարդապետը ըսաւ, աղէ՞կ է՝ թէլը թողու-

ցիր, հիմայ ալ կ'ըսես ըէյիաները դու  
քրդուցիր . . . . :

Բացայայտենք :

Սյս տանժիկոթարանութեամբ Ս.  
Հայրիկը՝ այնչափ պարզ անձ մը կուզեն  
ներկայացնել հասարակութեան իրենց  
խամխալադ խելքին նժարովը՝ որ իբր  
հեռագրական նամակի ստորագրութիւ-  
նը չգիտնար թէ՛ նամակագրին ինքնա-  
գիր ստորագրութիւնը չկրնար ըլլալ :

Եւ այս ինքնատեղծ պարզութիւնը  
չինժու ստախօսութեան մը փոխարկելով  
կուզեն այնպիսի անուանարկութեան մը  
ելլել, որպէս թէ որբազանը ինքը՝ ան-  
խոհեմաբար իր խօսքովը տեղիք տուած  
ըլլայ :

Ո՛ր ենք անմիաններ, ո՛ր ենք . Պօլ-  
սոյ հասարակութիւնը՝ միթէ ձեր վան-  
քին հաւերը կարծեցիք, որ պէ՛ւնէ՛ ով  
մը խափէք :

Ո՛վ ըսաւ ձեզի, որ հրապարակախօ-  
սութեան ասպարէզին մէջ ատանկ եւզ-  
մաներ կան, ի՞նչու ե՞րբ-ի-դ :

Չէ՞ք գիտեր, և չէ՞ք լսած, որ հոս

էշերն անգամ եղանակով կը զուացնեն :

Ձեր անթիւ յուռութեանց մէջ՝ գէթ պատմական օրէնքն եթէ յարգել գիտնայիք՝ վրանիս կը մնայիք : Միթէ ամեն զեղծումները՝ ձեզի համար, ձեզի հետ, ձեր հեղինակութեամբը սրբազործուած ու նուիրագործուած են, ի՞նչ են :

Երբուրնցած էք արդեօք, ամեն տեսակ ծայրայեղութեանց մէջ Ո. կարգի դերակատարներ հանդիսանալ :

Ուխտած էք ապաքէն ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչև սպանցէք բարոյական անձնաւորութիւննիդ, որ արդէն հոտեալ իցէ, քանզի աւելի քան զտասնամեայն է :

Մշոյ խնդիրը՝ Ոահմանադրութեան տարեկից ըլլալովն հանդերձ՝ թէև քանիցս Ազգ. վարչութեան ծանրատաղ տուկ զբաղմանց մէջ փիւսկիւլլիւ պէլայի պէս քիչ մը քիչ խոչընդոտներ յարուցած չէ, բայց և այնպէս՝ ամբողջ ազգի մը գլուխ չի կրնար ուտել :

Դուք և ձեզիպէսները միայն ասանկ պարագայներու մէջ՝ ուշ կամ կանուխ

էշ—նահատակներ կըլլաք անշուշտ, ինչպէս ձեռնէ առաջ եղածներն ու ձեռնէ ետքը ըլլալիքներ շատ համրած և պիտի համրէ տակաւին ազգային անաչառ պատմութիւնը :

ըդարեւ էշ է այն մարդ՝ որ իր դիմացինը իշու տեղ կը դնէ . այնպիսին է որ երկրիս վրայ ամեն ատեն իրեն համար նորանոր փորձութիւններ պատրաստելով, դէպ ՚ի կորստեան անդունդը քեօրն ու կը վազէ, և յանիրաւի տրտունջներ կը բառնայ երեւակայական բազդի, պատճառանաց և պարագաներու դէմ՝ երբ չարաչար սատակման կը մատնէ ինքզինքը՝ բիւրանգամ նղովելով զաշխարհ ու իր անձը, որոնք խիստ անմեղ գործիքներ պէտք էր դատուէին նախախընամութեան շնորհած անձնիշխանական սուրբ, արդար և անսխալ օրինաց առջև :

Յիշեցէք այն առածը՝ որ կըսէ, « էտէն՝ պուլուր տիւնեասը տրր » :

Սասնկները՝ վաղը մէկալն օր քիչ մը նեղի գալու ըլլան՝ ի՞նչ զրպարտութիւններ և ի՞նչ գանդատներ չեն բարդեր

խեղճ ազգին գլխուն, իրենց վիճակը՝  
ամենուն աչքին առջեւ դնելով, բամբ  
բասելով և մեղազրելով Հայութիւնը՝ որ  
իրը թէ իր եկեղեցականները այն աս-  
տիճան թշուառութեանց և տառապա-  
նաց մէջ թողուցած ըլլայ : Միանգամայն  
չխոստովանելով բնաւ թէ՛ արդեօք որ  
քան պատճառներ արուած են իրենց  
կողմանէ՝ մինչեւ որ ինկած են այդ դրոյն  
մէջ, զոր անոնք ուրիշներու համար փո-  
րած ու պեղած էին :

Առակ մ'ալ խօսինք, իբրեւ յար օրի-  
նակ սա ներկայ խնդրոյս :

Ազահ մարդուն մէկը՝ որ մը ծովե-  
ղերքը պարտելու ելած, տեսաւ որ նա-  
ւէ մը խիստ երկայն և հաստը «երէն» պի-  
ճի ահագին վայտեր ցամաքը կը հան-  
ուէին, երկու աչքի արալըխ ինչպէս ը-  
րաւ չըրաւ, վերջապէս յաջողեցաւ ա-  
նոնցմէ հատ մը գողնալով օմուղը շալ-  
կած՝ ցամաքին դէպ 'ի ետեւի կողմը ե-  
լած լեռնէն 'ի վեր փախցնելու :

Ս. յնպիսի խիստ ծանր բեռի մը տակ  
ճնշուած՝ սիրան ալ ահ ու դողի մէջ,

մագլցելով դէպ 'ի վեր ելած ատեն՝  
Ճնկուըները դողդողալով, շունչը կտրած  
տապախառն արեւուն խորշակներէն ալ  
ներդուելով՝ մինչդեռ արիւն քրտինք կը  
թափէր, և մահուան դողը կը դողար,  
յանկարծ աչքերը դէպ յերկինս բարձ-  
րացնելով՝ « Աստուած իմ, ըսաւ . կը  
տեսնաս անշուշտ իմ տագնապներս, ու-  
րեմն կազաչեմ այս քրտունքս — որ «էջ  
պէս կը վազեն — մարտիրոսաց արեան  
հետ խառնես » :

Ըստ սմին օրինակի, մեր այս երկու  
հարամաներն ալ՝ իրենց շունչը դործքե-  
րովը՝ Ազգի մը գլխուն պատիժ ու պա-  
տուհաս կտրելու համար՝ խաներուն պու-  
ճախը մնալնին, անօթի պառկելնին, ճա-  
նապարհորդային նեղութեանց հանդի-  
պելնին, կշտամբանաց և հալածանաց  
արժանանալնին, զրկանաց տոկալնին,  
անհրաժեշտ ամբաստանութեանց մատ-  
նուելնին, վերջապէս այս կերպով՝ բէր  
բէրուշան ըլլալնուն նախապատճառները՝  
թող իրենցմէ փնտռեն, ուր պիտի տես-  
նեն անշուշտ թէ ուրիշ բան չեն, եթէ

ոչ անժուժկալութիւն , ազահուժիւն , հեշտասիրութիւն , որկրամոլութիւն և ամենայն չարեաց արմատն՝ զարծաթսիրութիւն :

Հազար անգամ կրկնեմ , դարձեալ չեմ յագենար ըսելէ՝ թէ ասանկ մարդիկ փոսերնին՝ իրենց ձեռքով կը փորեն , և ՚ի նանիր կը բամբասեն ու կը թշնամանեն , զոմն այսպէս և զոմն այնպէս :

Մերկ ճշմարտութիւն մը :

Խորիմեան , ոչ առաքեալներէ մեծ , և ոչ նոյն ինքն էՄՄԱՆՈՒԷԼԷՆ վեր մարդմէ : Միթէ հնար էր որ ամեն ամբաստանութիւններէ զերծ և ազատ մնար : Ատոր ո՞վ կը զարմանայ : Բայց վայ իցէ մարդուն այնմիկ՝ ոյր ձեռն եկեացէ դայթակղութիւն : Եւ ՚ի վերայ այսր ամենայնի , միթէ հնարաւոր բան է , որ որչափ ուժգին ալ ըլլան հողմունք , միօրինակ տապալել կարողանան ամեն ծառ իրենց արմատէն : Քառ և ոչ երբէք : Հոս ալ կը յիշեցնեմ ձեզի թուրքին առածը թէ՛ հէր գուշուն էթի եէնմէզ :

Մենք գիտենք , որ ձեզի այնչափ

հեշտ կուգայ արդարի մը արիւնը մատնելը՝ որչափ դասայիք զինւորի մը պատերազմի դաշտին մէջ անզէն ճանապարհորդի մը գերի վարելը :

Եթէ դուք Սրեւելեան պատերազմին զինւորներէն ըլլայիք, ի՞նչ խեղճ պոփոխութիւն գերի չսլիտի վարէիք արդեօք իբրև Ռուսո գազախներ :

Այս տեսակ յուսոյ ակնկալութիւնները՝ խիստ կարճատև ըլլալէն անմիջապէս ետքը, ձեր կենաց և պատուոյ վտանգներով՝ հազարապատիկ պէտք է տուժէք՝ աստ և ՚ի հանդերձելումն :

Մինչև հոս գրածներնիս, մեր մտացոյժին և դատողութեան համեմատ՝ համառօտ հերքում մը՝ սեպելով, ամենեւին միտքերնուն թող չանցունեն թէ՛ իրենց գրածներուն կարեւորութիւն մը տալ ուղած ենք, այլ մեր նպատակը մի միայն Հայրիկի երգուեալ հակառակորդաց զէնքերուն տկարութիւնը աշխարհածանօթ ընել էր, ինչպէս որ կարծեմ բաւական ըրած ալ եմք :

Ասկէց ետքը քիչ մ'ալ իրենց հաս-

կնայի ոճով վերջին անգամ տեսութիւն  
մ'ալ ընենք ու այնպէս քէմէնչէն խօշ-  
թուխնին տանք . բայց նախ սա հետեւ-  
եալ ոտանաւորը դնենք և ապա անցնինք  
մեր առաջադրութեանը :

Եթէ ունիք ականջ լսել ,  
Արդէն շատ են , ինչ որ ըսի .  
Սեւին երես սապոն քսել ,  
ձերմկցընել չը հասկցուի :

Իմ միտս այն էր , ձեր սօջ սխմեմ ,  
Թաթիկներնիդ՝ մէկ քիչ քաշէք .  
Հայրիկին վրէժս ինչո՞ւ առնեմ ,  
Գուք ինքնին ձեր սուս կը քանդէք :

Զի այն օրէն յանցանք մեծ էր ,  
Մինչ Վանահայր ձեր Խրիմեան ,  
Հերիք ըսաւ այդ լակոտներ ,  
Վանքին կաթը ծծեն կենան :

Պատրիարքի արժանիքը ,  
Քեզ զի՞ փայթ է Տէր Եսայի .  
Ճանչցնելու վլիդ պարտքը ,  
Ուրկէց առիւր չարածճի :

Մինչեւ շահ մը՝ որ չունենաք,  
Աղբին անկած ծակ աչքերով,  
Շատոնց հիմայ կելնէք կերթաք,  
Յոտից փոշխա թօթափելով:

Այն որ բազմաց սէր խանդակաթ՝  
Ձեր աչքերուն փուշ է մտած,  
Յուտոյ ծիծաղն, Հայոց այն բաղդ,  
Ի՞նչու ապրի ձեր դէմ կանգնած:

Ուրեմն արի՛ք վնտ մշակներ,  
Ահա ժառանգն է սա՛ աղբին,  
Ո՛հ չեն պակսիր, ձեր մօտ ձեռքեր,  
Քամել արիւն այս արդարին:

Եթէ խլել եւ տապալել,  
է ձեր պաշտօնըն՝ ի բնէ,  
Մանգաղդ ընդէր չէ սովորել  
Չարն հատանել ՚ի սկզբանէ:

Բարւոյն՝ անկումն է կործանում,  
Այլ թէ չարին՝ վե՛հ յաղթանակ,  
Ընդէր չուրիք այն բորբոքում,  
Ա՛նդ դիմել, ուր կայ մրցանակ:

Խօսակցութեան շինծու ձեւեր,  
Ա՛հ, ինչ խարդախ, ինչ խաբուսիկ,  
Ձեր խիղճ կառնէք սեւերեմններ,  
Ոտքերնուդ տակ բոպիկ բոպիկ:

Կրկած ունին ատանկ փօլմ,  
Մեր Պօլսեցիք բընաւ երբէք,  
Դուք ինչ մտքով ապա-պալա  
Մաշուն ծախել ոտք ելեր էք:

Գացէք, գացէք Քրտորդիներ  
Լեռան որսեր ձեզ կսպառեն,  
Ձեզ համար հոս՝ գոց են դռներ,  
Խօսքը մարդուն՝ մէյ մը կըսեն . . .



## ՏՐԱՄԱԽՕՍՍՈՒԹԻՒՆՔ

— Պէ ախպար, ի՞նչ է.ք տուեր՝ չէ.ք  
կրնար առնել սա՛ վարդապետներէն :

— Ինչ որ իրեն.ք տուեր՝ չեն կրնար  
առնել Հայրիկէն :

— Իշտէ անոն.ք խրիմեանի ըրածներ  
կրսեն և կը հրատարակեն կոր : Սաղըր  
իչիւն գա՞ն տէ՛ֆա էղան օգու՛նուր : Սուտ  
խու՛ւ ըլլալ պէտ.քը չէ՛ եա :

— Ո՞րն է ըսածներնին, պատմէ՛ որ  
տեսնամ :

— Ականջդ խուրչի՞ն կաթեր է . չե՛ս  
լսեր որ պառ պառ կը պոռան թէ՛ Ս.  
Կարապետի վան.քը կործաներ է :

— Զէրգէլէ՞ է հաներ, ի՞նչ է ըրեր :

— Զիյտեմ ինչպէս ընելը, բայց սանկ  
կը հասկցուի որ՝ վան.քին պօտուրումը  
գտնուած եաղին քիւբերը ճաթեցուցեր  
է . քիւմէսին հաւերը՝ սամսարներուն  
խղդել տուեր է . կովերը մորթեր՝ փաս-  
տըրմա շիներ, մէտէյին ուզած տեղերը  
հէտիյէ դրկեր է, խայմախի, կարագի խա-  
զանները՝ շալկեր վարագ թռուցեր է .

Ռուսաստանէն կորզած քարպօններովը՝  
եպիսկոպոսութեան քիւլահը խարմիշ է  
ըրեր . վանքին միաբանութիւնը՝ մէկիկ  
մէկիկ մորթեր՝ տէրիներնին սոյմիշ ըրեր  
մէջը պիւթիւն թուլում՝ բանիրի լեցու-  
ցեր և էրզրումայ սանճախը փէշկէշ տա-  
րեր է . վիլայէթի միւթասարըֆութեան  
խիւլուս չախմիշ ընելուն վրայ ալ մա-  
թուֆ զազէթաճիին մէկը գօրգօրցուցեր,  
մինչև պատրիարքութեան խաֆտանը  
հագուցեր է :

Վանքին մախսէնները գտնուած 30 —  
40 տարուան այն պատուական նոյեան  
հին գինիներուն մէջ ջուր խառներ է ,  
ան կիւզէլիմ թութէ հանած բախիները՝  
միաբանութեան յարկինք շանցունելով՝  
ուրին ճուրին ըրեր է . սրկէ նրկէ հէտի-  
յէ եկած պարարտ օրտէկները՝ մարդու  
խուրսախ շանցած՝ ողջ ողջ կը համբառ-  
նան եղեր . մատղաշ խուզիները ինքը  
միայն ճաշակելով՝ կաղ ու բորոտ այծե-  
րը միաբանութեան զօրով թօփուզով կը  
կերցունէ եղեր . չիֆտիկին կատանայի  
պէս կիւզէլիմ խըսըրախները՝ վարդա-

պետներուն էմնիյէթ շըներով՝ հառըլ հառըլ դիմացի լեռը կը փախցունէ՝ կէօ լիւքները միայն միաբանութեան կը թողու եղեր :

— կէօլիւկը ի՞նչ է :

— կէօլիւկը ըսուածը՝ մանր մունր ցած ու պըտըլիկ աւանակներ են, որոնց վըրայ մեր գրքակալ և էշէքչէքմէզ վարդապետները նստած ատեն՝ զավալլընէրուն ոտքերը բիւթիւն բիւթիւն գետինը կը քսուի եղեր :

Սյն խորտիկ բաստեղները՝ փոխանակ ծուածեղ շինելով՝ վանականաց բարբարել տալու, սխտոր քացախ կը կերցնէ եղեր, և ինքը սխտորէն շատ ախորժած ըլլալուն համար՝ խեղճերուն փիլավին վրայ ալ անցունել տալով՝ սարմուսախլը փիլավ պատրաստել կուտայ եղեր : Թող չի տար եղեր որ չոր դայիսին քիւլահ շինելով՝ հէմ ուտեն, հէմ վեղարի տեղ գլուխնին անցունեն : Տէրըն տասի իրիկուն Ս. կարապետի անունով՝ ժողված կամ գողցած փայտերնին շթողուր եղեր որ իրենց բարեկամաց կամ

աղգականներուն տուները աչրբմիշ ընեն : Խնայողութիւնն ալ այնչափ սաստիկ է եղեր որ՝ քէօմիւրի տեղ միշտ թէզէկ կը վառէ եղեր : Արեղաթողի օրերը՝ մինչդեռ ուրիշ վանահարց օրով հերիսա կը ծեծեն ու կ'ուտեն եղեր, ասոր օրով ալւորիկ ստըրօբայով ծեծ կուտեն եղեր : Առջի վանահայրները՝ բարեկենդանի օր միաբանութեան հետ Աշրթութուրա կը խաղան եղեր, բայց ասիկայ՝ հինաւանդ սովորութեան ականջ չկախելով՝ ասոնց հետ միայն ջուռը, իսկ վանցի տղայոց հետ փատուկը կը խաղայ եղեր, ֆրիստոսի այն խօսքը առարկելով թէ՛ « թոյլ տուք մանկաւոյդ այդմիկ, զի դոցա է արքայութիւնն Աստուծոյ » : Ամենեւին թոյլատուութիւն չընէր եղեր՝ որ վրճկին օրերը ուխտաւորաց քովս երթալով՝ « խաւանօղներնուդ մէջի հաւկիթները տուէք որ՝ անոնք կոտորենք տէ՛՛ ձեզի չի դպնանք » ըսեն : Սաստիկ կարգիլէ եղեր տաղաւարներուն գեղերն երթալ « գայլ ըլլանք տէ՛՛ դառներ պատուենք » ըսելու : Վերջապէս՝ վասն զի

Հայրիկն ալ վանեցի էր, վասն զի շինա-  
կան էր, վասն զի գլուխը չօպանի պէս  
բէօսատէքի խալբախ կը դնէր, վասն զի  
քաջաքարող էր, վասն զի Սրժիւ կը թը-  
ռուցէր, վասն զի վարագայ վարդա-  
պետները ամեն պերեց վանքի մէջ լե-  
ցուց, վասն զի նախաշլը գուլպա կը  
հագնէր, վասն զի ճակատի բերչէմն՝  
կալբաղից, սաղաւարդից և չաթալթա-  
գից աիւրս կը ցատկէր, վասն զի Ս. շըխ  
— Ղարիպի պէս միշտ « ա'խ, օ'ֆ » կը  
հառաչէ . . . :

— Էյ ճանըմ, գլուխս ճաթեցաւ պէ,  
այդ ո՛րքան բան շարեցիր, սօնը չեկաւ  
դնաց : Ս'ն աւանակներն ալ՝ այդքան նե-  
ղութիւններու համբերելով՝ կէսէ խա-  
վուխ սալլամիշ ընե՛նուն տեղ՝ զօ՛ր բան  
մ'էր վուճուտը վերցընել :

— Հէ՛յ քուզում հէ՛յ, դուն գիտես  
քի ատոր բրօվան չըրի՞ն : Ըրի՛ն, ըրի՛ն  
ամմա՛ անիծից արմատ դնտա՛կը տակ  
փախաւ :

Ահա ես խրիմեանի յանցանքները վեր-  
ի վերոյ պատմեցի, մնացածն ալ՝ ասոնց

պէս բաներ են : Դուն ինչ ունիս ըսելիք  
սա ղարիպ վարդապետներուն համար ,  
որ լեզու ունին՝ բերան չունին , կուտ մը  
ալ գիր բերաննին՝ մորթէ՛ զավայլըները :

— Անոնց մէրամը գիտե՞ա ինչ է :

— Ես ի՛նչ գիտնամ , կոկորդիլոսի պէս  
կուլան ամնա՛ ի՛նչ ըլլալը չեմ հասկնար :

— Ուրեմն եկուր ես ալ քեզի այն  
հասկցունեմ : Բայց նախ եւ առաջ սա  
պէտք է գիտնաս որ՝ Մշոյ խնդիր ըսե-  
լով Ս. կարապետի վանուց մէկ քանի աշ-  
եփէի վարդապետներուն +ճշտեղը բե-  
րելու կամ չբերելու դժուարութիւնը  
խմանալու է , և այս տասնամեայ կիճիւր  
ուրիշ բանով չի յարդարուիր՝ եթէ ոչ  
կամ խրիմեան , յանդաւոր հրատարակուե-  
լու է , կամ ասոնց ճիտը մէյ մէկ քար  
կախելով Յովհաննու պէս ծովը նետելու  
է որ Մշոյ աշխարհքը խաղաղի :

— Մ.՝ օղուլ , ինչո՞ւ այդպէս խաւարի  
մէջ կը քալես , քու խելքդ անգամ մը  
խրիմեանի արդարութեան կողմը վազեր  
է , բնականաբար հոն ամեն բան ուղիղ  
կը տեսնաս , եկուր անգամ մ'ալ ասոնց

կողմը անաչառապէս փոքր ինչ աչքէ  
անցուր և տե՛ս , գուցէ այնպիսի իրա-  
ւունքներ ունենան , որ տավաճինին խա-  
տին ըլլալուն համար չկրնան պաշտպա-  
նելու :

— Խօսք կը հասկնամ , ինձի ան ըսէ :

— Ինչո՞ւ չեմ հասկնար , խօսք հաս-  
կցող հուսա սլ մնաց , մէյ մը ես , մէյ  
մ՞ալ սա քովի տունին պատը :

— Կատակ պէտքը չէ , խնդիրը ծա-  
նրը է :

— Ամա՛ն , առջեւնիս ծով է , չելլես  
ձեռքերդ խաղցունես՝ անխտէ պաթմիչ  
կըլլայ հա՛ :

Յիս նայէ Պարոն . Տավաճինին երբ  
խատի եղաւ , խնդիրը՝ քանի՞ տարուան է :

է՛յ աղէկ ավօգաթութիւն տօղ-  
րուսի , սանքի խատիութիւնը թէ որ  
պատրիարքութիւնն է ըսել կուզես՝ տա-  
հա նոր բան է , անկից առաջ ինչո՞ւ չը  
կրցին իրաւունքներնին պաշտպանել՝ եթէ  
ունէին , անանկ չէ :

— Հայ՛ , հայ՛ . հէմ խօսք է , հէմ Աւե-  
տարանինն է :

— Քու խելքովդ միայն այդպէս է ,  
մէյ մ'ալ ինծի հարցուր :

— Սէպէ քի հարցուցինք , խիկար ի-  
մաստուն ըսէ նայինք :

— Ես բէք անանկ մեծ իմաստուններ-  
րէն չեմ ամմա , քեզի պէսներն ալ պա-  
տէմ թըրնախիով քիթիս ծակէն կը հա-  
նեմ :

— Զգէ , վաղ եկանք , խօսքերնուս  
կարգը մոռանք , քու խելքովդ ինչպէս  
է՞ ան ըսէ՞ նայինք :

— Իմ խելքովս միաբանի մը համար՝  
հա՛ պատրիարքութիւն , հա՛ վանահայ-  
րութիւն իքիսի պիր ուստա իշխյի պէս  
բան մ'է շիտակը կըսեմ , ի՛նչ մեղքս  
պահեմ :

— Հա՛ , հա՛ , հա՛ . ծօ անոր համար վա-  
նահայրութենէն մարդը բապուճօուզ կը  
փախցնէին կոր : Միթէ դուն կը կարծես  
որ վանահօր դէմ մայմունի պէս դողա-  
ցող միամիտ խախալօղներէ՞ն են ասոնք ,  
անամճ են՝ անամճ , վանահայր մը մինչեւ  
խօզ խապուխին չը խօթեն նէ՛ հիչ եա-  
շաթմիշ կընեն :

— Ես ընդհանուր առմամբ կարծիք  
կը յայտնեմ կոր, ատանկ պաշըպօղուխ  
ներուն խելքս չը հասնիր :

— Անանկ է նէ՛ կարճ կապէ :

— Ըսել է որ ատոր համար խրիմեանը  
ատոնց բանին չէ եկեր :

— Անշուշտ, նա քանի որ վանական  
ղեղծումները բառնալ, բարեկարգու  
թիւններ հաստատել կուզէր, անոնց եէ  
նիչէրիյի օճախը պաթըրմիշ ընելու պէս  
բան մ'էր, քիչ մը քիչ օրը 40 անգամ  
հաճի էյվաթի պէս հէլպէթ դիմացը կը  
տնկուէին ազուէսաբար բէշերնին վրայ  
բերելով մեռելի պէս բարեւ բռնած  
աճապ ի՞նչ կըսէին : — Նստէ՛ք վարդա  
պետներ, ահա հոն գտնուածի պէս ձեզի  
պատմեմ :

— Ծառայ եմ քաւ լիցի, մենք քէօ  
վոտաց հողն ենք. մենք քէօ քով ալլա  
հի խարընճան ենք : Արժանի չենք ոչ  
միայն նստելու, այլ մեր կանգներն ան  
գամ քէօ դիմաց միեծ մեղք է. չէ՞ տիւ  
Ս. կարապետի խաջորդն իյես. — հրա  
մայեցէք եթէ բանըմ ասելիք ունիք —

ըսկուն պաներ որ կանես տիւ մեր եիւ-  
 վա կը քրքրես , մեր օճախ կը մարես ,  
 խաղարաւ որ տարի այսպէս գնացել ենք  
 ինչո՞ւ նոր պաներ տիւրս կը խանես , հի-  
 մի մեր ազգ Ֆուանկերաց քէօվ ամեն  
 պան կը սովրեն՝ վանքերն պանըմ չեն  
 յուսար , մէյէր գիւղացիք միանգամ որ  
 աչուընին պացուէ՝ ըսկուն մեղի խաց  
 չեն տայ , տիւ մեղք կանես էսա քէօ  
 անձին , մեղի ու միեր վանից ու միեր  
 յաջորդներաց , թող տուր ըսկուն եր-  
 թանք , ինչպէս որ գնացել ենք , մեղի  
 ահա ոչ ոսկի և արծաթ պակասի , մեր  
 շտեմարաններ ամեն համբարեալ՝ կուզէ  
 սովն աշխարհք տանէ , կուզէ խայոց  
 ազգէ մէկ խատ չի մնայ : կուզէ Քրթեր  
 երկիր ամեն թալլեն , մեղի պանըմ չեն  
 կանայ աներ , այն ինչ ժամանակ որ կա-  
 մենանք մենք էլ կը քրթանանք միեր  
 վանք կէնէ մեր մօտ կեղնի , կաղաչեմք ,  
 երես անկեալ կաղաչեմք , մեր ճամպախ  
 մի մոլորցուցեր ՚ի սէր հրաշալի Ս. կա-  
 րապետի ոսկորներաց միեկ մէնգըպէ ալ  
 ասեմք քեղ խօսքերնիս վերջացուցեմք

խասկացա՞ր, խօշ չի խասկացար ինչ ա-  
նեմք, քիւնչի մեր ծեռնից պանըմ չի  
դար :

Ժամանակով տգէտ քահանային մէկն  
որ բնաւ կարդալ՝ ժամերգութիւն ինչ  
ասել է չէր դիտեր, բայց ռամիկ ժողո-  
վուրդէն — որ Աստուած պակաս չանի-  
այնպէս խաբել էր որ ամենն օր եկեղե-  
ցւոյն մէջ բուրուառ ծեռքն այս ձայ-  
նաւոր կը կարդար .

Երթանք Բէնկայ ,

Գանք Սէմառայ ,

Երթանք Բէկայ ,

Գանք Սէմառայ :

Մէկ օր մը տիւրս ելեր՝ լսեր է տի՛  
Ալիթան անունով գիւղ մը կայ, հետեւ-  
եալ օր՝ իր ժամերգութեան միջոցին  
այսպէս ասաւ .

Երթանք Բէնկայ ,

Գանք Սէմառայ Ալիթան :

Յանկարծ բուրվառ կործաւ, մէջի  
կրակներ ամենն ժողովրդոց վրայ թա-  
բաւ, սկսան աղաղակել՝ մինչեւ հիմայ՝  
Երթանք Բէնկայ, գանք սէմառայով լաւ

կերթայիք տէր պապա, ինչուտ էր պէտք  
ալիթան, որ մեզ փորձութեան խանդիպ-  
ցուցիր: Ճշմարիտ է ասաց քահանան,  
ես իմ ծառքով իմ գլխուն պէլա խանի:  
Կը խասկընաս Սրբազան, որ միեկ բառ  
աւելցնելով ինչքան չարիք խասաւ ի-  
տայ տրտիրոջ համ ժողովրդի գլխուն:  
Հիմայ որ տիւ էտքան տրպատուններ,  
տպարաններ, կիրքեր, կազաթաններ,  
կանոններ, տահա չեմ գիտեր ինչ պա-  
ներ որ կաւելցուցես՝ դժոխքի կրակներ  
ամմեն մեր վրայ պիտի թափես, տիւ ալ  
վերջ բիւշման կե՛նիս, լախքին նէ Քոյ-  
տայ՝ կուշ էլտէն ուչտի: Սոն բիւշման-  
լք կասեն, ահճէ էթմէզ: Եկ՛ու քէօ  
նախորդներաց ճամպախ պունի, ըսկուն  
երթանք ուտենք խմենք մեր քէֆ նա-  
յենք, Ազգին աղխոթող ըլլինք: Կէնէ  
տիւ կիտնաս ծառայ եմք մեր մօտ էլ  
պան չի մնաց ասելու:

— Դուք, ձեր խրատներ ամմեն ինձ  
տուեցիք, որ ասոնք են՝ այնպէս չէ:  
Գնացէք ձեր տեղ՝ զոր ինչ հրամայեալն  
է ձեզ՝ զայն արարէք: (Քիթին տակէն)

Ձեզի մէկ պատիժ պէտք էր՝ որ երկինքէն իջնար, ահա իօրիմեան զրկեց Սատուած ձեր գլխուն վրայ, ինչպէս Մովսէսը՝ Փարաւոնի տան վրայ : Տեսնենք թէ Տէրն ինչ կը յաջողէ : Եւ անոնք ալ իրենց սենեակ քաշուելով՝ — ծօ, աս պալալի մարդի, էսոր տակ մէկ կարպուզի կապուղ դնենք՝ կայտըրմիշ անենք, կէշ չերնի, ասի խօսքի կալու մարդ չի, բնաւ երբէք :

Այն ատեն կարապետ և Եսայի մալկըճ օղլուները՝ անհնարին ցասմամբ ձեռքերնին դէպ յերկինս բարձրացունելով՝ երդուան յանուն Ս. կարապետի՝ ոչ ուտել և ոչ ըմպել մինչեւ սպանցեն զիօրիմեան :

Ինի մէնիմ, Սատուած իմ . . . :

Մամուլն Եսայանճին չէ :



1870

Y. Miller